

բարոյագիտութենէն: Այլ խօսքով, փիլիսոփայական բարոյագիտութեան ոլորտին մէջ, *մարդը* կ'անջատուի Աստուած-մարդ յարաբերութենէն եւ կը կողմնորոշուի *բնութեան օրէնքի* կողքին: Այս գաղափարը, *Վերածնունդի* շրջանին, զարգացման ու ծաղկման գլխաւոր նիւթը դարձաւ, ինչպէս օրինակ մարդոց հաւասարութիւնը՝ ըստ բնութեան օրէնքին:

Բարոյագիտութեան ոլորտէն ներս, որոշ նշանակութիւն ունի Լուծերի դիրքը՝ ընդդէմ *ազատ կամքին* (Free Will): 1525 թուականին հրատարակուած իր մէկ երկը կը կոչուի «*Անազատ կամքին մասին*» (լատ. բնագիր՝ „De servo arbitrio”), որ պատասխան մըն է, տարի մը առաջ հրատարակուած **Երազմոս Ռոտերդամցիի**¹ (հոլ.՝ Erasmus Roterodamus, 1465 – 1536 թ.) «*Ազատ կամքին մասին*» (լատ. բնագիր՝ „De libero arbitrio”) երկին:

Մ. Լուծերի համաձայն, եթէ որպէս քրիստոնեայ ընդունինք (հաւատանք), որ Աստուած ամենակարող է, ուրեմն կարելի չէ մարդկային կամքին որեւէ ազատ կարողութիւն վերագրել: Այլ խօսքով, մարդկային կամքը Աստուծոյ հանդէպ բոլորովին անկարող է: Իսկ եթէ մարդոց մօտ, կամքի որոշ կարողութիւն մը երեւի, ան Աստուածային կարողութիւնն է, որ կը գործէ մարդոց մէջ: Մ. Լուծեր անկասկած ճիշդ հաստատում կատարած է, երբ կ'ըսէ՝ մարդկային ազատ կամքը խոտոր կը համեմատի Աստուծոյ ամենակարողութեան հետ. եւ եթէ մարդ գիտակցի իր անկարողութեան, այն ատեն, անմիջապէս պիտի հնազանդի ու պիտի յուսայ արժանանալ՝ Աստուծոյ ողորմածութեան ու շնորհին:

Մ. Լուծերի *ազատ կամքի* դէմ դիրքաւորումը, սակայն, բարոյագիտութեան մարզէն ներս անհետեւանք չէր կրնար մնալ: Ասիկա պարզապէս կը նշանակէ, որ *ազատ կամքի* բացակայութեան պարագային, որեւէ բարոյական կոչ անկիմաստ պիտի դառնայ, պիտի յառաջանայ որոշականութիւն (Determinism) մը եւ մարդ պատասխանատու պիտի չնկատուի՝ իր ըսած խօսքերուն եւ գործած արարքներուն համար:

➤ ՄԱՐԴԿԱՅՆՈՒԹԻՒՆ

Վերածնունդի շրջանի փիլիսոփայութեան կեդրոնական նիւթ կը դառնայ, ինչպէս յիշուեցաւ, *մարդը* իր բանականութեամբ, կրթութեամբ, արժէքով ու ստեղծագործ ուժով: Շատ շուտով այս շարժումը կը դառնար փիլիսոփայական միտքի նոր ուղի մը, որ կը կոչուի *Մարդկայնութիւն* (Humanism): Մարդակեդրոն եւ աշխարհիկ փիլիսոփայական այս նոր ուղղութիւնը, կը հակադրուէր միջնադարեան դպրական (սքոլաստիկ, Scholastic) փիլիսոփայութեան, արդարեւ փիլիսոփայութիւնը կ'անջատուէր աստուածաբանութենէն եւ կը վերականգնուէր հնադարեան փիլիսոփայութիւնը, մասնաւորաբար՝ Պլատոնի, Էպիկուրոսի եւ Պլուտինի երկերը:

Մարդկայնութեան հիմնական սկզբունքը յարգանքի արտայայտութիւնն է՝ մարդու իրաւունքներուն եւ արժանապատուութեան, ինչպէս նաեւ կարելիութիւնը մարդու համար կենցաղային նպաստաւոր ու մարդավայել պայմաններ